**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**N ԳՀԾՁԲ-20-10/2-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 09 .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն.Ցոյյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան»-ն, ով գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **06.12.2019թ.** կնքված N ԳՀԾՁԲ-20-10/2-3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են 26.12.2019թ. ՀՀ կառավարության N 1919-Ն որոշմամբ և ՀՀ պաշտպանության նախարարի 12.02.2020թ. Ծանուցում N 2-ՊՆ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայությունների** գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան **խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ** (այսուհետ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչությունը:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան» |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք.Մեծամոր, 1 թաղամաս, 24 շ. 505բն. |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ Արմավիրի մ/ճ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 205033203857 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 49564508 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | |
| Ն.ՑՈՅԱՆ | Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/2-3 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| CPV կոդ | Ծառայության անվանումը | Տեխնիկական բնութագիր | Չափի միավոր | Միավորի նախահաշվային պլանավորված գինը (դրամ) Խորքային ջրահան պոմպերի մակնիշները | | Մատուցման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ԷՑՎ-6-16-100 | ԷՑՎ-8-25-100 | |
| 50511100/506 | Խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | Շարժիչի քանդում, այրված փաթույթների դուրս բերում, ստատորի փորակների մաքրում, պարկուճավորում, փաթաթում, առանցքակալների, վռանների,կրունկի և կրնկակալների փոխարինում նորով | լրակազմ | 183,600.0 | 224,600.0 | Ծառայության գնումը կիրականացվի ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչության կողմից տրվող հայտերի հիման վրա՝ մինչև 15.12.2020թ.: |
| | | Խորքային պոմպերի քանդում,բանվորական անիվների, ուղղորդիչ սարքերի, պաշտպանիչ վռանների, ռոտորի վռանների, առանցքակալների և լիսեռի փոխարինում նորով | լրակազմ | 109,000.0 | 144,000.0 | |
| | | Կցորդիչի փոխում, էլ. շարժիչի և պոմպի միացում, կարգաբերում, ներկում և փորձարկում բեռնվածքային ռեժիմում | լրակազմ | 28,000.0 | 30,000.0 | |
| | | Խորքային պոմպի ապամոնտաժում | հատ | 14,500.0 | 14,500.0 | |
| | | Խորքային պոմպի մոնտաժում | հատ | 29,000.0 | 29,000.0 | |
| | | Պողպատե խողովակների մոնտաժում, ապամոնտաժում | գմ | 1,000.0 | 1,400.0 | |
| | | ՎՊՊ 1x25մմ² մալուխի փոխարինում նորով: | գմ | 2,000.0 | 2,000.0 | |
| Ընդամենը | | | | 812,600.0 | | |

1. Գնման պլանավորված նախահաշվային առավելագույն գինը կազմում է **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ:
2. Խորքային պոմպի ապամոնտաժման, մոնտաժման, խողովակների մոնտաժման և ապամոնտաժման, մալուխի փոխարինման, խորքային պոմպի և շարժիչի վերանորոգման դեպքում տեղափոխումը կատարվում է կազմակերպության միջոցներով և հաշվին, իսկ միայն խորքային պոմպի և շարժիչի վերանորոգման դեպքում տեղափոխումը կատարվում է ՀՀ ՊՆ-ի միջոցներով և հաշվին:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

[illegible] պաշտպանության նախարարություն
[illegible] դեպարտամենտի պետ

Ն.ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան»

Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-10/2-3 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայությունների | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20-ը |
| 1 | 50511100/506 | Խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 1 250 000 | 2 500 000 | 2 500 000 | 2 500 000 | 3 750 000 | 3 750 000 | 3 750 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն.ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ «Անդրանիկ Գասպարյան»

Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ